

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑՈՒ «ՔՆՆԻԿՈՆԻ» ԵՐԿՐԱԶԱՓՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆԸ

Ա. Ս. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Անանիա Շիրակացու «Քննիկոնը»¹ կաղմված է «ի բաղմաղան և յոքնարեղուն մատենից»։ Ներկայացնելով «Քննիկոնում» ամփոփված գիտությունների և գիտելիքների ընդհանուր ծավալը և ընտրության եղանակը, Գրիգոր Մազիստրոսը նկատում է. «Թէպէտ և մասնաւոր ղփոշէտեսական ղօրէն գործասէր մեղուի ամբարեաց ի մեղուանոցի ալղը՝ ի բաղմավէպ մատենագրից քաղղեացոց, Յունաց և ամենայն աղգաց»²։

Գրիգոր Մազիստրոսի վկայության և Անանիա Շիրակացու մեղ հայտնի ժառանգության քննությունից պարզվում է, որ «Քննիկոնի» մեջ մտնող նյութերի մի մասը նրա սեփական ստեղծագործությունն է, մյուս մասը՝ տարբեր հեղինակներից ամբողջական կամ հատվածաբար առնված նյութեր և Սուրբ Գրքից քաղվածքներ։ Հավանաբար ինքն է թարգմանիչը այն նյութերի, որոնք մտնել են «Քննիկոնի» մեջ և մինչ այդ թարգմանված չեն եղել հայերեն։

Անանիա Շիրակացու «Քննիկոնում» տեղ դրած ինքնուրույն ստեղծագործություններն իրենց խորագրերում հեղինակի անունը չեն ունեցել և, առավելապես, այդպես էլ արտագրվել ու հասել են մեղ. ըստ այդմ այդ նյութերի հեղինակային պատկանելությունը պետք է ճշտել բանասիրական ճանապարհով։ Մինչդեռ ուրիշներից առնված գործերը Շիրակացին «Քննիկոն» է մուծել մեծ մասամբ պահպանելով հեղինակների անունները, սրանք առանձին-առանձին արտագրվելիս, «Քննիկոնից» անջատվել և ձեռք են բերել ինքնուրույնություն, և դժվարությունների հետ էլ կապված սրանց քննիկոնյան ծագման հաստատումը։ Այս կարգի որոշ գործեր երբեմն արտագրվել են Շիրակացու աշխատություններին առնթրելով՝ պահպանելով իրենց հեղինակի անունը (այսպես՝ «Պալոսի Աղեքսանդրացույ նախերգան ի ներքսասածութենէ» երկը³, «Արիստոտելէս, ընդդէմ որոց ասեն Աստուած ղտարերսդ այսպէս առադրէ» հատվածը և այլն)⁴։

«Քննիկոնը», այսպիսով, պատահական հավաքածու չէ, այլ որոշակի նպատակով և ծրագրով կաղմված դասագիրք, ըստ գիտությունների նյութերի հյուսվածք, շարահարված տրամաբանական հաջորդականությամբ, որի մեջ չէր կորչում ո՛չ իր սեփականը, ո՛չ էլ ուրիշներից քաղվածը։

«Քննիկոնից» քաղվածքներ կատարող գրիչները մեծ մասամբ ընդօրինակել են բովանդակությամբ համասեռ նյութերի առանձին խմբեր կամ էլ

1 Տե՛ս Ա. Ս. Մաթևոսյան, Անանիա Շիրակացու «Քննիկոնը», ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1974, № 7, էջ 66—78, № 8, էջ 72—81։

2 «Գրիգոր Մազիստրոսի Թղթերը», Ալեքսանդրապոլ, 1912, էջ 8։

3 Անանիա Շիրակացի, Մատենագրություն, աշխատասիրությամբ Ա. Գ. Աբրահամյանի, Երևան, 1944, էջ 318—328։

4 Նույն տեղում, էջ 322։

առանձին նյութ-միավորների Սակայն «Քննիկոնի» նյութերը միայն այդ եղանակով չեն հասել մեզ: Նրանք երբեմն առանձին կամ այլ միավորների հետ միասին որևէ ինքնուրույն մատենագրական երկի համար հիմք են հանդիսացել, որոնց մեջ Շիրակացու գործերը պահպանվել են և՛ ամբողջական, մեծ կամ փոքր հատվածներով, և՛ վերաշարադրված ու համառոտված կերպարանքով, հաճախ նաև աղավաղվելով ու պարուրվելով խորհրդավորության շղարշով:

«Քննիկոնը» վերականգնելիս պետք է նկատի ունենալ Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստասիրութեան»⁵ աշխատությունը, որը Շիրակացու գործի տեսական հիմքն է կազմել, և Գրիգոր Մագիստրոսի⁶ ու Ստեփանոս Ասողիկի⁷ հանրահայտ վկայությունները՝ նրա տարողության հնարավոր սահմանները ուրվագծելու համար: Այնուհետև պետք է հաշվի առնել քառյակ արվեստների և նրանցից դուրս «Քննիկոնում» հիշատակված գիտությունների ծավալը Շիրակացու ժամանակներում, ինչպես նաև՝ հնարավոր այն հավելումներն ու կրճատումները, որոնք կատարել է հեղինակը հայրենի երկիրը լուսավորելու նպատակից ելնելով: Ուշադրություն պետք է դարձնել և այն հանգամանքի վրա, որ այդ երկը ստեղծվել է կաթողիկոսի հրամանով, որպես հայոց հոգևոր պարոններում բարձրագույն ուսման դասավանդման ձեռնարկ և որ մտադրություն է եղել եպիսկոպոսական հատուկ ժողով գումարել այն քննելու և գործողության մեջ դնելու նպատակով:

Այս ամենը նկատի ունենալով, Շիրակացին իր աշխատության պատրաստի բաժինները մաս առ մաս ուղարկում էր կաթողիկոսին, որոշ հարցեր համաձայնեցնում նրա հետ՝ հետագայում սրբագրելու կամ խմբագրելու ակնկալություններով: Անաստաս կաթողիկոսը 667 թ. վախճանվեց: Կարճ ժամանակ անց վախճանվում է նաև Շիրակացին, իսկ «Քննիկոնը» այդ վիճակում պահվում է կաթողիկոսարանում, մի քանի դար մնալով գրվանի տակ:

Այսօր առանձին վկայությունների, հայտնի և նորահայտ ձեռագրական նյութերի ընձեռած հնարավորության սահմաններում կարելի է ներկայացնել «Քննիկոնի» բովանդակությունը, որը բաղկացած էր երկու մասից:

Առաջին մասը կազմված է՝ Ներածությունից (որը էակաների մասին գիտություն է) և ա. «Թվաբանութիւն», բ. «Երաժշտութիւն», գ. «Երկրաչափութիւն», դ. «Աստղագրաշխութիւն» բաժիններից:

Երկրորդ մասը նույնպես կազմված է՝ Ներածությունից (որը տոմարագիտություն է) և ա. «Տոմար», բ. «Տիեզերագիտութիւն» և «Մակածութիւնք», գ. «Մատենագրութիւն», դ. «Հռետորական ուսումն» (մասնակի) բաժիններից: Սույն հոդվածում փորձում ենք վերականգնել «Քննիկոնում» դետեղված քառյակ գիտություններից «Երկրաչափութիւն» բաժնի տարողությունը:

* * *

Անտիկ աշխարհում և միջնադարում քառյակ արվեստների կիրառության ուսումնասիրողները, խոսելով երկրաչափության մասին, գրում են, որ գիտության այդ ճյուղը հետզհետե ընդարձակվելով, ոչ միայն Եվկլիդեսի ամբողջ

⁵ Դավիթ Անհաղթ, Սահմանք իմաստասիրութեան, Երևան, 1960:

⁶ «Գրիգոր Մագիստրոսի Թղթերը», էջ 8:

⁷ Ստեփանոս Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 285:

համակարգն էր բովանդակում, այլև աշխարհագրությունը և երկրաչափական ճարտարապետությունը: Մագիստրոսի վկայությամբ «Քննիկոնում» քառյակ արվեստների մեջ թվաբանությունից և երկրաչափությունից հետո մյուս դիստություններն էին երկրաչափությունն ու աստեղագիտությունը, «որք են ի շարունակ քանակէ»⁹: Ուրեմն քառյակ արվեստներից կամ գիտություններից երրորդը «Քննիկոնում» երկրաչափությունն էր: Երկրաչափությունն այնքան կարևոր տեղ էր զբաղեցնում քառյակ արվեստների համակարգում, որ հնում այդ համակարգը կոչվել է «երկրաչափական», ինչպես հետագայում՝ «ուսումնական»: Կամ լայն առումով՝ «համարողութիւն» (մաթեմատիկա): Այս առիթով, «Քննիկոնի» մասին խոսելիս Գ. Մագիստրոսը մեջ է բերում Պլատոնի խոսքերը, գրված նրա լսարանի ճակատին՝ «Անեկրաչափական ո՛վ մի ներսնանցէ, զայսոսիկ ասելով, — բացատրում է Մագիստրոսը, — զի մի ոք անկատար ի քառիցն ենթակայէ, մտցէ ի լսարան»¹⁰:

Ուրեմն քառյակ արվեստների դասավանդման հետ է կապվում երկրաչափության, հետևաբար նաև նրա մեջ մտնող բաղադրիչների կիրառությունն ու շրջանառությունը, ինչպես Հունաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս, նաև՝ Հայաստանում: Հունաստանում որպես երկրաչափության դասագիրք գործածվում էր Ալեքսանդրյան մաթեմատիկական դպրոցի դասախոս Եվկլիդեսի (III դար մ. թ. ա.) «Տարերքը», որ բաղկացած էր 13 գրքերից: V դարում Բոյեցիոսը «Տարերքի» առաջին շորս գրքերը թարգմանում է լատիներեն, որն իր անունով գործածվում է Արևմտյան Եվրոպայում: VIII դարում Եվկլիդեսին թարգմանում են արաբերեն: Մի դար հետո արաբերենից թարգմանված Եվկլիդեսը հայտնի է դառնում Արևմուտքում:

Մինչդեռ, ինչպես վկայում է Անանիա Շիրակացին, Բյուզանդիայում սովորելով «լիով դարուեստ համարողութեան», այսինքն «քառից արուեստը». ինքն այն բերում է «յերկիրս Հայոց» և, «Քննիկոնի» մեջ մուծելով, կաթողիկոսին է ներկայացնում 666/7 թ.: Հետևաբար, հույներից հետո Եվկլիդեսի «Երկրաչափութիւնը», որպես քառյակ արվեստների համակարգի բաղադրիչ, հեղինակի անվան պահպանությամբ, արաբներից ավելի վաղ օգտագործել են հայերը:

Հայերեն ձեռագրերում Եվկլիդեսի «Երկրաչափութիւնից» պահպանվել է մի հատված երկու տարբեր բնույթի աշխատությունների՝ «Տոնապատճառ» ժողովածուի և Հովհաննես Դամասկացու «Յաղագս դոյի, էութեան և պատահման» երկի մեջ («Թարգմանեալ ի Հայ լեզու ի Յունարէն գրոց Բագարատ Մամիկոնեան») ¹¹, որի և—նք բաժիններում տեղավորված է նյութերի այն խումբը, ինչ Տոնապատճառում: Մաշտոցի անվան Մատենադարանում մենք

8 Ե. Քասունի, Պատմություն հայ ին դաստիարակության, Բեյրութ, 1959, էջ 114—115.

9 «Գրիգոր Մագիստրոսի Թղթերը», էջ 8:

10 Նույն տեղում, էջ 9:

11 Լրիվ խորագիրը՝ «Յաղագս գոյի, էութեան և պատահման սրբոյն Յոհաննու Դամասկացոյն ասացեալ և թարգմանեալ ի Հայ լեզու ի Յունարէն գրոց Բագարատ Մամիկոնեան: Ներածութիւն իմաստասիրութեան, որ է Իսաղոթիկի, զկնի այսր և զամենայն իմաստասիրութեան գործարան որ է Ղանոնն ըստ Հելենացոց բարբառի» (Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. N° 8132, էջ 156ա, հմտ. ձեռ. N° 8444, էջ 316ա):

ունենք Եվկլիդեսի «Երկրաչափութեան» նշված հատվածը, այդ կարգի երկու ձեռագրերում ընդօրինակված XIII դարի վերջերին¹²:

Երկուսում էլ վերջին նյութերը նույն բաժիններն ունեն և վերջանում են համապատասխանաբար 217ր և 184ա էջերում:

Որպեսզի համոզվեինք, որ այս նյութերը պատահականորեն են Հովհաննես Դամասկացու հիշյալ երկի մասը կազմել կամ թարգմանիչ Բագարատ Մամիկոնյանի գործը չեն, մենք քննեցինք այդ նյութը պարունակող մի շարք ձեռագրեր (որոնցից շատերը թերի էին)¹³: № 8444 ձեռագրում Հովհաննես Դամասկացու երկի ցանկում, Խ—ԽԳ համարների դիմաց հիշվում է մեզ հետաքրքրող նյութերի խումբը, որը, սակայն, բնագրում բացակայում է գրիչ Հակոբ վարդապետ Շամախեցու արդարացուցիչ պատճառաբանությամբ¹⁴: № 116 ձեռագրում այդ նույն համարների տակ թե՛ ցանկում և թե՛ բնագրում բոլորովին այլ նյութեր են շարադրված, որոնք կազմում են նախորդ նյութերի տրամաբանական շարունակությունը¹⁵: Մենք ստուգեցինք նաև Հովհաննես Դամասկացու վերահիշյալ երկի հետագա թարգմանությունը՝ կատարված վրացերենից, Սիմեոն Պղնձահանեցու (1188—1255) ձեռքով¹⁶: Այստեղ «Երկրաչափութեան» և նրան կից նյութերի հետքն անգամ չկա¹⁷:

Եվկլիդեսի «Տարերբի» և նրան կից նյութերի վերը բերված դասավորությունն ենք հանդիպում նաև Թյուբինգենի համալսարանի № 74 ձեռագրում¹⁸, Դամասկացու նշված երկում:

Ուրեմն նյութերի այս խումբը մի այլ ձեռագրից է մուծված ինչպես Դամասկացու նշված երկի մեջ, այնպես էլ Տոնապատճառում:

Ձեռքի տակ ունենք ձեռագրերի մի խումբ ևս, որոնց մեջ, ինչպես երևւում է, «Քննիկոնի» առաջին մասի, այսինքն քառյակ գիտությունների՝

12 Ձեռ. № 4166 («Տոնապատճառ»)

216ա Եվկլիդես վասն տարերաց երկրաչափութեան

217ա Մղոնահամարք երկրաչափութեան

217բ Աւղաչափութիւն

217բ Յաղագս թուո կշոոց

№ 5132 (Դամասկացու երկը)

180բ Գիրք Եվկլիդես յաղագս տարերաց երկրաչափութեան

183ա Յաղագս երկրաչափութեան

183ա Աստեղարաշխական երկրաչափութիւն

183բ Յաղագս թուականութեան և կշոոց

8132-ում շարունակվում է. «Այս քեզ յինէն ընծա գրաւորական, վերձանեալ ի Պորփիրի ներգործութենէն, զեղգեղեալ ի Պտղմեական գրամարտիկ ուսմանց [և ի] բաղմավէպ [պատմութենէն] Պապա Աղեքսանդրացու. ողջ լեր»:

13 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. №№ 7151, 1739, 2333 և այլն:

14 Նույն տեղում, ձեռ. № 8444, էջ 347ր: «Աւարտ դրոցս ծաներուր, ով հետեօղբ ճշմարտութեան, զի զև և զևԱ և զևԲ և զևԳ պրակքն, զորս ի ցանկումն տեսանէք յիրում կարգի՝ աստ ոչ գրեցի, վասն զի կարի տաղտկացայ վասն անյարմար շարադրութեանց բառիցն գրքիս որպէս իսկ տեսանին...»: Այնուհետև շարունակում է թե՛ Յաղագս թուականութեան և կշոոց փոքր, իսկ Յաղագս մաքրարար մեոոնի, իՉ. Յաղագս պարզատումարին և Հայոց տումարի՝ նյութերի շարադրումը, որոնք կան նաև ցանկում:

15 Նույն տեղում, ձեռ. № 116, էջ 3ա:

16 Ն. Ա. Կ. ի. ն. յ. ան, Սիմեոն Պղնձահանեցի և իր թարգմանությունները վրացերեն, Վիեննա, 1951, էջ 6, 57—101:

17 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 5789, էջ 5ա, 178ր:

18 Systematische Alphabetischer, Hauptkatalog der Königl. Universitäts Bibliothek zu Tübingen, F. Fink und Z. Gjandschekian, Tübingen, 1907, էջ 111—112:

էակաների մասին գիտություն, թվաբանություն, երաժշտություն, երկրաչափություն, աստղաբաշխություն, համառոտ ծաղկաքաղն է, եռանդուն միջամտությունամբ: Մյուս մասերի նման երկրաչափությունը նույնպես սկսվում է հարց ու պատասխանի ձևով. սկիզբը առնված է Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստասիրութեան» գործի ժէ պրակից¹⁹:

Երկրաչափության նախագիտելիքը ավարտվելուց հետո կարդում ենք.

«Դարձեալ և ձև երկրաչափութեան ի գաւառէ ի գաւառ, և ի քաղաքէ ի քաղաք, այսպէս.

Ի Դվնայ Մ մղոն մինչև ի Կարնոյ քաղաքն, և ասպարէս Ռ, և նետաձիքս Մ, որ է Մ բիր...», և նշված է նույնքան ուղի՝ մղոնով, ասպարեզով և նետաձիգով հաշված, որքան նախորդ՝ Եվկլիդեսի «Տարեքի» ձեռագրի մղոնաչափերում:

Հաջորդ նյութը օդաչափությունն է:

«Իսկ յօդաչափութիւն ոմանք ասացին...»

Սրան հաջորդում է «Եւ վասն նաւարկութեան և ծովուց ճանապարհի» հատվածը²⁰, որին այս նյութերի հետ հանդիպում ենք առաջին անգամ:

Շիրակացուց բերված չափական նյութերից հետո (հեղինակի անվան հիշատակությամբ) դալիս է աստղաբաշխությունը՝ «Պատճէնք տումարի» ներկայացնելու խոստումով, որտեղ և ավարտվում է նյութը և էջը, ապա սկսվում են այլ նյութեր:

Այսպէս. երկրաչափության բաժնում ունենք՝

ա. «Երկրաչափութիւն» (նախագիտելիք)

բ. «Դարձեալ և ձև երկրաչափութեան» («մղոնաչափք»)

գ. «Օդաչափութիւն» (համառոտ). նույնն է «Աստեղաբաշխական երկրաչափութեան» հետ

դ. նաև չափական գիտելիքներ՝ Անանիա Շիրակացու անվան հիշատակությամբ.

բ, գ, դ նյութերը նույնն են նախորդ ձեռագրերում պահպանված բեկորի հետ, միայն թե այնտեղ սկիզբը Եվկլիդեսի «Երկրաչափութիւնն» է, այստեղ՝ երկրաչափության բաժնի նախագիտելիքը: Սակայն այս բ, գ, դ նյութերին ավելի հաճախ և հաստատուն հանդիպում ենք «Աշխարհագրութեանը» կից, որը բանասիրությանը հայտնի է «Աշխարհացոյց» անունով, որից և արտածվել են այս նյութերը: Օրինակ, Մատենադարանի № 1717 և 5613 ձեռագրում այդ երկերը ունեն այսպիսի դասավորություն.

ա. «Յաղագս աշխարհագրութեան»,

բ. «Մղոնահամարք»,

գ. «Աստեղաբաշխական երկրաչափութիւն»,

դ. «Վասն չափուց և կշռոց».

19 Դավիթ Անհաղթ, Սահմանք իմաստասիրութեան, էջ 132:

20 «Պոնտոսէ, որ է Տրապիզոն Ռ միղ մինչ ի Կոստանդինոպոլիս: Եւ անտի Ն միղ մինչ ի Մազտարէ քաղաքն: Եւ անտի Յ միղ մինչ ի յՌօտօս: Եւ անտի Շ միղ մինչ ի Կիպրոս: Եւ անտի Մ Ն միղ մինչ ի Զաֆն, որ է Ուլպէ ի Էաւահանպիսս Երուսաղէմայ: Ապա թվարկում է ծովերը և քառասուններկու գետերը և շարունակում. «Անանիա Շիրակայնոյ Համարողի Յաղագս տարիոնի...» բաժինը:

Ինչպես հրևում է բնագրից, Բ և Գ, այսինքն՝ «Վասն երկրաշափութեան» կամ «Մղոնաչափք» և «Աստեղաբաշխական երկրաշափութիւն» նյութերը «Աշխարհագրութեան» կից են և նրանից արտածած²¹, իսկ Դ-ն՝ Անանիա Շիրակացու «Քննիկոնի» թվաբանության բաժնից է վերցված: Բաղմաթիվ են այն ձեռագրերը, որոնք ունեն Կ, Բ և Գ նյութերը (№№ 532, 1486, 2019, 2291, 2748 և այլ ձեռագրերում): Այս երեք խումբ ձեռագրերի համեմատությունից և համադրությունից հրևում է, որ նրանք միևնույն երկի նույն բաժնի մասերն են, ընդ որում բոլոր խմբերի մեջ կայուն «Մղոնաչափք» և «Աստեղաբաշխական երկրաշափութիւն» միավորները մերթ ընդօրինակվել են իրենց մայր «Աշխարհագրութեան», մերթ նրանից առաջ տեղավորված առանձին նյութերի հետ:

Ելնելով սրանից այդ նյութերը կարելի է դասավորել այսպես.

- ա. «Երկրաշափութիւն» (նախագիտելիք),
- բ. «Եվկլիդեսի Տարերք»,
- գ. «Յաղագս աշխարհագրութեան»,
- դ. «Մղոնաչափք» («Վասն երկրաշափութեան»),
- ե. «Վասն նաւարկութեան և ծովուց ճանապարհի...»,
- զ. «Աստեղաբաշխական երկրաշափութիւն»:

Սրանք կաղմել են Անանիա Շիրակացու «Քննիկոնի» «Երկրաշափութիւն» բաժինը: Հետաքրքրական է, որ Պապուոս Աղեքսանդրացու «Երկրագրութիւնը», որ «Աշխարհագրութեան» հիմնական աղբյուրներից է եղել, իրեն կից ունեցել է Եվկլիդեսի «Երկրաշափութիւնը»:

Ձեռագրական նյութերի սույն վիճակը մեզ բերում է այն եզրակացության, որ.

ա) Եվկլիդեսի «Տարերքի» հատվածը, կից նյութերով, առնված է մի այլ մատյանից և բռնագրոս մուծված Հովհաննես Դամասկացու նշված երկի մեջ:

բ) Եվկլիդեսի «Տարերքի», «Երկրաշափութեան» նախագիտելիքի և «Աշխարհագրութեան» կից «Մղոնաչափք երկրաշափութեան» և «Աստեղաբաշխական երկրաշափութիւն» հանրահայտ նյութերի համատեղ գոյությունը տարբեր բնույթի ձեռագրերում նշանակում է, որ երբեք նրանք իրար հետ գտնվել են մի մատյանում, որից արտածվել են:

գ) Քանի որ «Աշխարհագրութեան» կից սույն նյութերը գտնվում են նրա վերջում, տրամաբանական է, որ նրանից («Աշխարհագրութիւնից») առաջ տեղավորված է եղել Եվկլիդեսի «Տարերքը»:

դ) Որոշ ձեռագրերում «Մղոնաչափքի» և «Աստեղաբաշխական երկրաշափութեան» սկզբում տեղավորված է երկրաշափության նախագիտելիքը. նշանակում է, այն գտնվել է բաժնի սկզբում, որպես ներածություն, այսինքն նախորդել է Եվկլիդեսի «Տարերքին», «Աշխարհագրութեանը», «Մղոնաչափքին» և «Աստեղաբաշխական երկրաշափութեանը»:

ե) Հայ իրականության մեջ երկրաշափությունը, որպես ինքնուրույն գիտություն, ներկայացրել է Անանիա Շիրակացին իր «Քննիկոնում», քառյակ

²¹ Գ. Պետրոսյան, «Մղոնաչափք» և «Աստղաբաշխական երկրաշափութիւն» աշխատությունների հարցի շուրջը, «Պատմա-բանասիրական հանդես», 1972, № 4, էջ 200—208:

արվեստների ծրագրին համապատասխան: Վերը բերված նյութերը նույնպես համապատասխանում են այդ ծրագրին: «Մղոնաչափքը» և «Աստեղաբաշխական երկրաչափութիւնը», ինչպես նաև շափերի ու կշիռների հատվածը, Անանիա Շիրակացու ստեղծագործություններն են, որոնց հետ համատեղ հանդիպող Եվկլիդեսի «Տարերք», «Աշխարհագրութիւն», երկրաչափության նախադիտելիք նյութերը նույնպես մտել են Անանիա Շիրակացու «Քննիկոնի» «Երկրաչափութիւն» բաժնի մեջ:

Մենք այս եզրակացությունը հանգեցինք հենվելով մատենագիտական վկայությունների և ձեռագրերում վերոհիշյալ նյութերի միասին գտնվելու բաղմամբիվ օրինակների վրա: Սակայն այս բանը միայն արտաքին երևույթ չգիտվելու համար, և առաջ քաշված եզրակացություններն առավել հավաստի և իրական դարձնելու նպատակով, սույն բնագրերը քննենք ըստ էության առանձին-առանձին և կրկին ցույց տանք, որ ա) սրանք բոլորը միասին մտել են «Քննիկոնի» «Երկրաչափութիւն» բաժնի մեջ և բ) Անանիա Շիրակացին այս նյութերի մի մասի հեղինակն է, մյուս մասի՝ թարգմանիչը:

Սկսենք «Աշխարհագրութիւնից», որ ամենակնճռոտ հարցն է:

* * *

Հայ մատենագրության մեջ սլահականվել է աշխարհագրական մի հոյակապ հուշարձան, որը մի քանի հարյուրամյակ է արդեն տեղափոխվում է դարից դար, հեղինակից հեղինակ, վերնագրից վերնագիր, մերթ դառնում է երկրների նկարագրություն, մերթ քարտեզների բացատրություն, տիեզերագիտության և աշխարհագրության դասագիրք և այլն: Հիմնական պատճառը «Քննիկոնի» անհայտ կամ մասնատված լինելն էր, որից հետո «անտերացած» երկի ճակատագիրը սովորական է. կամ վերագրվում է որևէ մեկին, ում հարմար է նկատվում, կամ մնում է անհեղինակ և տարուբերվում ենթագրությունների խարխուլ նավակի վրա:

Մենք ընդունում և գիտակցաբար օգտագործում ենք «Աշխարհագրութիւն» անվանումը, որովհետև երկը սկսվում է հեղինակային «Յաղագս աշխարհագրութեանց» բնագրական բառերով, որը հետագայում ուրիշները դարձրել են վերնագիր, եւթ, նույնիսկ ավելացրել են Մովսես Խորենացու անունը:

Ուրեմն, իր գործը «Աշխարհագրութիւն» է անվանում հեղինակը. իսկ «Աշխարհագրութիւն» [է] իբրու տիեզերագիտութիւն կամ երկրագրութիւն, որ ճառէ զգրից աշխարհի, մանաւանդ երկրի և զբաժանմանէ և զհանգամանաց նորա» կարգում ենք նոր Հայկազյան բառգրքում: Այնինչ «Աշխարհացոյց» [է] ցոյց և ցուցակ աշխարհի, տեսարան տիեզերացն՝ ծրագրեալ իւր օրինակաւ»²², «Պատկերք աշխարհի կամ երկրի»²³:

Այս երկու վերնագրերի տակ, ինչպես տեսնում ենք, պետք է հասկանալ (և հասկացվել է) երկու տարբեր բան:

«Աշխարհացոյց» անվանումը դրվել է հետագայում, «Յաղագս աշխարհագրութեանց» առաջին բառերի փոխարեն, և հեղինակային չէ: Դեռ ավելին, այս բառերով սկսվող նախադասությունը սկիզբ չէ և իրենից առաջ ունի այլ

22 Բառգիրք նոր հայկազեան լեզուի, Վենետիկ, հատ. Ա, 1837, էջ 261:

23 Առձևոն րառարան հայկազեան լեզուի, Վենետիկ, 1865, էջ 101:

բնագիր: Առաջժամ առաջ շանցնենք և դործածենք «Աշխարհագրութիւն» ճիշտ անվանումը:

«Աշխարհագրութեամբ» զբաղվող մասնագետներին հայտնի չի եղել, որ Անանիա Շիրակացին գրել է «Քննիկոն», որի երկրաչափությանը նվիրված բաժնում հասուկ տեղ է հատկացվել աշխարհագրությանը, որպես այդ առարկայի բաղադրիչ մաս:

«Աշխարհագրութիւնն» ավարտվում է այսպիսի ամփոփումով. «Ահա կատարեցան ամենայն տիեզերք և պատմութիւնք խաւսից, և ահա կամիմ զչափ դորա համառատել մղոնախաղաց ոտնաչափութեամբ, աւժանդակաբար ասպարիզաճէմ դիտաւորութեամբ»²⁴: Որոշ ձեռագրերում այս ամփոփումը համառոտված է: Վերը բերված տարբերակը ավելի ճիշտ է արտացոլում նյութը:

Հիշյալ ամփոփման մեջ մենք գործ ունենք մատենագրական շորս միավորների հետ, հանգամանք, որը մինչև այժմ ուշադրության չի արժանացել: Դրանք են. ա) «Ամենայն տիեզերք», բ) «Պատմութիւնք խաւսից», գ) «Մղոնախաղաց ոտնաչափութիւն» (երկրի տարբեր վայրերի հեռավորությունը միմյանցից մղոններով) և դ) «Ասպարիզաճէմ դիտաւորութիւն» կամ «գիտութիւն» (երկրի և տիեզերական մարմինների հեռավորությունը):

Վերջին երկուսը մեզ արդեն ծանոթ միավորներ են, որոնցից առաջինը ձեռագրերում հանդիպում է «Մղոնաչափք», «Մղոնահամարք ճանապարհաց», «Վասն գիտութեան մղոնաչափաց», «Վասն երկրաչափութեան», «Այլ ձև երկրաչափութեան» (սկիզբն է «Ի Դունայ ի Կարին Մ մղոն...»), իսկ մյուսը՝ «Աստեղաբաշխական երկրաչափութիւն», «Աւղաչափութիւն» (սկիզբն է «Ի հարաւային ծայրէն մինչև դհիւսիսային շրջանակն ասպարէզք յիսուն և ութ բիւր»)՝ վերնագրերով: «Մղոնաչափքն» ու «Աստեղաբաշխական երկրաչափութիւնը» ձեռագրերում մեծ մասամբ լինում են իրար կից, սակայն երբեմն հանդիպում են նաև առանձին ընդօրինակությամբ: Մատենագրարանի որոշ ձեռագրերում երկրորդ միավորը սլահականել է հեղինակի անունը. «Անանիայի Շիրակացուցն ասացեալ Հայոց վարդապետի Յաղագս բարձրութեան երկնից», որին հաջորդում են տոմարական մանր նյութեր, ապա՝ «Աշխարհագրութիւնը»²⁵:

Այժմ վերադառնանք առաջին երկու նյութերին. «Ամենայն տիեզերք» կոչված «Աշխարհագրութիւնն» է. «Տիեզերք» նշանակում է. «ընդհանուր աշխարհ, համօրէն կողմանք աշխարհի, ոլորտը երկրի. ամենայն երկիր բնակչօքն, տեղիք բնակութեան»²⁶: Այս ամենը մենք տեսնում ենք «Աշխարհագրութեան» մեջ, որի ներածականում տրվում է տիեզերագիտությունը և երկրի՝ որպես մոլորակի, նկարագրությունը, իսկ մյուս մասերում՝ երկրի ջրադրությունը, մայրցամաքի նկարագրությունը երեք՝ «Եւրոպա», «Ասիա» (Աֆրիկա) և «Ասիա» հատվածներով: «Այս բաժնի հիմնական աղբյուրն է Պապսոս Աղեքսանդրացու «Երկրագրութիւնը»²⁷: Ապա նկարագրվում են առանձին

24 Անանիա Շիրակացի, Մատենագրութիւն, էջ 354:

25 Մաշտոցի անվ. Մատենագրարան, ձեռ. № 2492, էջ 51ա—55բ, 4284, էջ 6բ—13ա:

26 Բառգիրք նոր հայկազեան լեզուի, հատ. Բ, էջ 875:

27 Ս. Ս. Երեմյան, «Աշխարհացոյցի» սկզբնական բնագրի վերականգնման փորձ, «Պատմա-բանասիրական հանդես», 1972, № 4, էջ 210:

երկրամասերը՝ ըստ մայր ցամաքների: «Հայաստանից և նրան շրջապատող երկրներից դուրս գտնվող երկրամասերին վերաբերող բաժինները հիմնականում հանդիսանում են Պտղոմեոսի աշխատության համապատասխան գլուխների համառոտ շարադրանքը... Գիտության համար նոր ինքն է Մեծ Հայքի, Վրաց աշխարհի, Աղվանքի, Պարսից աշխարհի, մասամբ և Կողքիսի, Հյուսիսային Կովկասի («Ասիական Սարմատիա») և Փոքր Ասիայի («Միջերկրակալ»), Միջագետքի ու Ասորիքի և, նույնիսկ, Հյուսիսային Աֆրիկայի ծովեզրյա մասի նկարագրությունը, որոնց նվիրված է «Աշխարհացոյցի» բնագրի մեծ մասը, — գրում է Ս. Նրեմյանը: — Նշված երկրամասերի պտղոմեոսյան նկարագրությունը չի բավարարել հեղինակին, և նա դիմել է այլ աղբյուրներին»²⁸:

Իսկ ի՞նչ բան է «Պատմություն խալսից»-ը, այսինքն լեզուների պատմությունը, որը կից է և՛ լեզել «Ամենայն տիեզերքի» նկարագրությանը, այսինքն՝ «Աշխարհագրութեանը»: Այս հարցի պատասխանը տալիս է Զմմառի վանքի հայերեն № 204 ձեռագիրը²⁹:

Զեռագիրը տարբեր ժամանակներում տարբեր գրիչների ձեռքով ընդօրինակված զանազան նյութերի հավաքածու է, որի 1—16 թերթերում («Աշխարհագրութեան» սկզբում) տեղավորված է մեզ հետաքրքրող նյութը³⁰: Յուցակ կազմողը նյութը ներկայացնում է այսպես. «Զեռագիրն ունի մի փոքր անարվեստ կիսախորան, որի վրա XIX դարի սկզբների շղագրով ավելացված է. «Աշխարհագրութիւն Մովսիսի Խորենացոյ»: Առաջին թերթը մաշված է և կեսը պատռված»³¹: Զարդագրով սկսվող առաջին տողից կարդում ենք.

«Այս ազգահամարք երից որդոցն Նոյի ի՛ ի երկիր կալան իւրաքա[նչիւր] ոք ի նոցանէ ի՛ ռուսանել գրով դրոշմե[ցի]»:

Արդ. քանզի պա ի՛ պատշաճ է ի՛ ճշմարտու ի՛ ստգտանել ամ ի՛ պատշաճիւք ճշմարտութեանն:

Լաւ համարեցաք եւ մեք, եղբայր սիրելի, ժողովել [հ]ամառատիւք ի Սուրբ [Դրոց] զաւկտակար բան[ս] ի շինուած փութ [յա]ւթարութեանդ [եւ ս]ակաւ արինակ գտցի առ քեզ ճշմարտութիւն իրաց կարեւորաց, առ ի խափանել զհակառակութիւն որ ծ[ն]անի յանգիտութենէ, եւ խաւարեցու-

28 Նույն տեղում, էջ 210:

29 Այն փոքրագիր մի ժողովածու է 16,8×12,8 մեծությամբ, գրված թղթի վրա: Մի կազմի մեջ ամփոփված 260 թերթերից 1—105-ը գրված է 1178 թ. Սամուել քահանայի ձեռքով, 173—200-ը՝ 1123 թ. Թադեոս քահանայի ձեռքով, Դրազարկում, 142—172-ը՝ Կարապետ քահանայի ձեռքով: Մնացած թերթերի մասին տեղեկություններ չկան (տե՛ս Մ. Քեչիշյան, Յուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին, Վիեննա, 1964, էջ 486: Այսուհետև՝ Յուցակ Զմմառի):

30 Այդ թերթերի լուսանկարները, որոնցից մենք օգտվել ենք, պահվում են Մաշտոցի անվան Մատենադարանում, լուսանկարների հավաքածուի 100 համարի տակ:

31 Ընդհանրապես ձեռագիրը շատ վատ է պահպանված. «Խիստ նեամաշ վիճակի մեջ է այժմ. — կարդում ենք ձեռագրի նկարագրության մեջ, — մանավանդ թուղթ 173-ն սկսյալ խոնավութենն իրարու փակած են թերթերը, եղծված է գրությունը, գրեթե փթած են թղթերը, այնպես որ փոքրիկ, անզգույշ հպումով մանոնք մաս մաս կիյնան: Զեռագրիս այս մասը, ավաղ, կարելի է բոլորովին ոչնչացած, կորած համարել, որովհետև նույնիսկ այն թղթերը, որ մասամբ կարելի էր լեզած է իրարմե անշատել՝ իրենց գրությունը կորուսել են, կարծես խոնավության քանդիչ ազդեցության ներքե գրությունը յոդս ցնդել է: Մատենիս մյուս մասերը նույնպես զերծ մնացած չեն խոնավության և ցեցի ազդեցություններեն. սկզբի քանի մը թղթերը մասամբ մաշել և պատռել են, վերջեն բազմաթիվ թերթեր ինկած են» (Յուցակ Զմմառի, էջ 486):

ցանկ զմիտս ստացողաց: Զի մեր որ ուսումնասէր մտաւք կամիմք հասոյ լինել ճշմարտութեան, զիտացուք ընդդէմ զբաժինս ազգաց եւ զտոհմն հարցն...

Զայս ամենայն ցուցցուք համառատիւք վկայութեամբ ի Սուրբ Գրոց:

Եւ սկսցուք ճառել զբան ի սկզբանէ արարածոց,
Առաջին մարդն Ադամ եղեալ ամաց ձէ ծնաւ զՍէթ»:

Շարունակում է Ծննդաբանությունը մինչև նոյն հասակտ, նրա Սեմ, Քամ, Հաբեթ որդիները և այնուհետև տրվում են սրանց ցեղաբանությունը, ջրհեղեղից հետո նրանցից առաջ եկած ցեղերը, լեզուները և նրանց բնակության վայրերը: Հրատարակիչը այս մասին գրում է. «Բառ առ բառ նույնն է Սամուէլ Անեցիի մեջ առաջ բերած ազգաբանության հետ»³²: Չնայած ո՛չ վերնագրում, ո՛չ էլ այլ կերպ չի նշանակված «Պատմութիւն խաւսից» նյութի հեղինակի անունը, դժվար չէ նկատել, որ այն վերցված է Հիպպոդիտոս Բոստրացու «Ժամանակագրությունից», կամ Ծննդոց պրքից: Սույն երկն ունի մանր խորագրեր, որոնցով նյութը մասերի է բաժանվում. այսպես.

«Բաժինի երկրի երից որդոցն նոյի՝ Սեմա եւ Քամա եւ Յաբեթի եւ բաժինի ազգացն նոցա.

Եւ առին սահմանք Սեմա՝ անդրանիկն նոյի, ի Պարսից եւ ի Բակարոնէ մինչև ի Հնդկս, և ձգեն մինչև ի յՌինոյկուրորոն:

Եւ Քամա՝ երկրորդ որդոյն, յՌինոյկուրորոյ մինչև ի Գադիրոն՝ կողմն հարաւային:

Եւ Յաբեթի՝ երրորդ որդոյն, ի Մարաց մինչև ի Դադիրոն՝ կողմն հիւսիսային...

Եւ որ խառնակեցան լեզուքն յետ ջրհեղեղին, կին ՀԲ:

Եւ որ զաշտարակն շինէին, այն ազգն էին, որ լեզուքն ընդ ամենայն երկիր սփռեցան...»:

Հաջորդ ենթաբաժինն ունի այսպիսի խորագիր.

«Եւ այս են անուանի ՀԲ լեզուացն», ուր թվարկվում է Հաբեթի որդիներից առաջացած տասնհինգ ցեղ և լեզու, և ամփոփում. «Արդ, ելին Յաբեթէ ի խառնակել լեզուացն ազգ ժե, եւ ունին ազգս այսոքիկ, որ ելին Յաբեթէ ի Մարաց մինչև ի Սպերիոն, եւ ձգեն մինչև յՈւլկիանոս, և հային ընդ հիւսիսի» և թվարկվում են այդ ազգերը:

Այնուհետև պատմությունը շարունակվում է այսպիսի կարգով. «Եւ այս են ազգ ի սոցանէ, որ գիտեն դպրութիւն». «Եվ այս են երկիրք սոցա». «Եւ այս են կղզիք սոցա», որով ավարտվում է «Այս սահմանք են Յաբեթի» բաժինը և սկսվում է գրեթե նույնպիսի հարցակարգով Քամի և Սեմի որդիների ցեղաբանությունն ու բնակավայրերի թվարկումը:

«Եւ ընդ ամենայն ազգ երից որդոցն նոյի ՀԲ»: Հիպպոդիտոսին հետևելով բառ առ բառ, բանաբաղը բաց է թողնում մի շարք գլուխներ, որոնք վերաբերում են «Վասն եկաց ազգացն, որ գնացին իւրաքանչիւր բնակութենէ և շոգան բնակեցան յաւաստ տեղիս» (11-րդ ենթաբաժին). «Եւ սլսս են անուանի ԺԲ լեռանցն անուանեաց», «Եւ գեոմ մեծամեծի եւ անուանի եւ խ», որոնց առանձին-առանձին հանդիպում ենք հայերեն ձևազրբերում Շիրակացու անունով հայտնի այլ նյութերին կից:

³² Նույն տեղում, էջ 487:

«Պատմութիւն խաւսից» շարադրանքն ավարտվում է այսպէս. «Արդ վասն յի յայտ եղեն վասն ազգաց երից որդւոցն նոյի՝ որ ընդ ամենայն աշխարհս րաժանեցան իթէ յումմէ ծնաւ Սեմ անդրանիկն կոչաւ զկողմն արեւելից, եւ Քամ՝ զկողմն հարաւոյ, եւ Յաբեթ զկողմն արեւմտից եւ հիւսիսոյ»: Այստեղ Հիւպոդիտոսից կատարած բանաբաղությանը անմիջապէս հարում է «Աշխարհագրութիւնը», այսինքն շարունակվում է «Ամենայն տիեզերքը»³³: Իսկ մինչ այդ «Պատմութիւն խաւսիցն» էր, այսինքն՝ լեզուների առաջացման և տարածման պատմությունը, որոնք «ընդ ամենայն երկիր սփռեցան»:

Մեր կարծիքով Հիպոդիտոսի «Մենդոց գիրքը» լրիվ չի բերված, այլ լրացմանված է միայն այն մասը, որը վերաբերում է լեզուների և ցեղերի տարածմանը: Այս բանը ապացուցվում է ոչ միայն Զմմաոի № 204 ձեռագրում բերված հատվածի առկայությամբ, այլև Հիպոդիտոսի «Մենդոց գրքի» մնացած մասի բովանդակությամբ, որը, մի տեսակ, անշատվում է նախորդից: Այստեղ արդեն սկսվում է Իսրայելի պատմությունը, այսինքն այն առանձին մի ժողովրդի պատմություն է և ոչ ցեղերի կամ լեզուների տարածման պատմություն: Հետաքրքրական է, որ Հիպոդիտոսի հունարեն բնագրում և հայերեն այլ թարգմանություններում Ադամի և Սեմի սոցիալաբանություններից հետո տրված ժամանակագրական ամփոփումները այստեղ չեն բերված: Նրանց մոտ «եւ այս եւն Հի ազգացն անուանեմ» վերնագրի փոխարեն այստեղ գրված է «եւ այս եւն անուանեմ Հի լեզուաց», որով հեղինակն ընդգծում է իր նպատակը, որ նա ոչ թե ժամանակագրություն է գրում կամ ազգերի պատմություն, այլ լեզուների պատմություն՝ «Պատմութիւն խաւսից»: Աբրահամից սկսած այս պատմությունը, առանձնացված նվազագույն Կեսսորացու «Ժամանակագրական կանոնից» (որն ավելի հարուստ է և առավել ճիշտ ժամանակագրությամբ փաստարկված), գտնում ենք մի այլ ձեռագրում «Մղոնաշափքին» և Շիրակացու այլ գործերին կից³⁴: Ուրեմն Հիպոդիտոսի երկի այդ հատվածը, որն սկսվում է Աբրահամից, «Պատմութիւն խաւսից»-ի մեջ չի մտնւ:

Հեղինակը աշխարհի ցեղերի և լեզուների առաջացման ու տարածման պատմությունը վերցրել է Սուրբ Գրքի հիման վրա կազմված Հիպոդիտոսի շարադրանքի սկզբից («Զայս ամենայն ցուցցուք... ի Սուրբ Գրոց...»)՝ և ցանկացել է հանգամանորեն, կատարյալ ձևով («ոճով ասացեալ») տալ այդ ցեղերի զբաղեցրած երկրների աշխարհագրությունը, որը, սակայն, հնարավոր չէր աստվածային գրքերից վերցնել, ուստի շարադրանքը շարունակելու համար նա դիմել է արտաքին (ոչ Աստվածաշունչ) գրքերին: Այդպես էլ շարունակում է (և ոչ՝ սկսում)։ «Յաղագս աշխարհագրութեանց յաստուածային

33 Բաց եւ թողնված «Աշխարհագրութեան» սկզբի նախադասությունները, որը կարելի է բացատրել պատահականությամբ, ասենք՝ զաղափար օրինակից այդ թերթի բացակայությամբ և այլն: Այդ կարող է կատարված լինել նաև գիտակցաբար. «Աշխարհագրութեան» հեղինակը հատուկ նպատակով էր պատճառաբանում աշխարհագրական նյութը արտաքին գրքերից վերցնելու իրողությունը, իսկ ձեռագրի ընդօրինակող գրիչը կարող էր չհասկանալ կամ ավելորդ համարել այդ պատճառաբանությունը և նույն ցեղաբանության ավարտից ու այդ բանն ամփոփող նախադասությունից հետո նրան միացնել հաջորդ առաջին հարմար նախադասությունը՝ «գոլովը» դարձնելով «յոլով»:

34 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 2679, էջ 208:

35 Նույն տեղում:

դիրս ոչ ուրեք դտանեմք ոճով ասացեալ, այլ դոյղն ինչ դուն ուրեք և այն դժուարահաս և տաժանելի:

Արդ, վասն զի անհասք դոցա եղևալ, մեր հարկաւորիմք յարտաքինս ձեռնարկել, որք զաշխարհագրութիւնս յարմարեցին ի ճանապարհորդութենէ և ի նաւարկութենէ, և ստուգեցին յերկրաչափութենէ: Եւ ինքն երկրաչափութիւնն գտաւ յաստեղաբաշխութենէ»³⁶:

«Աշխարհագրութեան» մեջ հիշատակված են արտաքին գրքերը. «Յորում (Պտղոմեոսի) ինքնագիր բոլորակին Տիեզերագրութեանցն առեալ Պապայայ Աղեքսանդրացոյ համառոտաբար երկրագրութիւն, յորմէ մեր և այլ ծայրաքաղ արարեալ գրեցաք զմեծամեծսն և զնշանաւորսն միայն» կամ՝ «Արդ սկսեցաք ըստ Պապայայ Աղեքսանդրացոյ երկրագրութեան, որ ըստ ինքնագիր բոլորակն Կղադէոս Պտղոմեայ Տիեզերագրութեանցն չափուց»³⁷: Իսկ Մեծ Հայքի հնգետասան փոքր աշխարհներ յաւսին գրում է. «Արդ կամիմ զդոսա մանրամասնաբար պատմել, թէ և սակաւ ինչ աշխատիցիմ ի գիր և ի բարտեղ»³⁸:

Ուրեմն «Աշխարհագրութեան» հեղինակը «Պատմութիւն խաւսից»-ը վերցրի է Հիպպոդիտոսից, որպէս Աստվածաշունչ գրքից քաղվածք, իսկ հեղինակի անունը չի հիշել, որպէսզի շեշտի այդ գործի աստվածաշնչական ծագումը: Շարունակությունը շարադրելիս հիմնականում օգտվել է Կղադէոս Պտղոմեոսի «Տիեզերագրութիւնից», նրանից համառոտված Պապայոս Աղեքսանդրացու «Երկրագրութիւնից», նրանցից առնելով այն և այնքան, ինչ և ինչքան իրեն հարկավոր է, իսկ Հայաստանի մասը՝ մանրամասնաբար, շարադրել է ինքն անձամբ³⁹:

Ուշագրության արժանի է այն հանգամանքը, որ աշխարհագրության և ազգերի, ուրեմն նաև լեզուների բաժանման պատմությունը միասին է ներկայացվել դեռ շատ հնուց: Մովսէս Խորենացին հին, անդիր զրույցների մասին գրելիս բերում է Հունաստանում փիլիսոփայություն սովորած մեկի այսպիսի վկայությունը. «Ով ծերք, յորժամ էի ի մէջ Յունաց զիմաստութիւն վարժելով, դէպ եղև ի միում աւուրց՝ զի վասն աշխարհագրութեանց և բաժանմանց ազգաց (ընդգծումը մերն է—Ա. Մ.) ի մէջ արանց իմաստնոց և հմտագունից բան ճառիր»⁴⁰: Այնպէս որ «Ամենայն տիեզերք և Պատմութիւնք խաւսից» նյութերը վաղուց են միասին ներկայացվել, որպէս երկրի և նրա բնակիչների մասին գիտելիքների տվող առարկա:

Այս երկու նյութերը միասին գրվելու և մասուցվելու վկայությունն են նաև, ինչպէս տեսանք, «Աշխարհագրութեան» առաջին նախադասությունները:

³⁶ Ա. Ն. Մ. Ե. Ի. Կ. Մ. Մատենագրութիւն, էջ 336:

³⁷ Նույն տեղում, էջ 338—339:

³⁸ Նույն տեղում, էջ 348—349:

³⁹ Մրանցից բացի «Աշխարհագրութեան» մեջ որպէս աղբյուր հիշատակված է նաև Կոստանդին Անտիոքացու «Քրիստոնեական տեղագրութիւնը» (նույն տեղում, էջ 338): Բանասիրութիւնը գտնում է, որ օգտագործվել են նաև «Ինչ-որ աղբյուրներ», «Արիւթնայ» վկայաբանութիւնը, «Աղեքսանդրի Գիրքը» («Պատմութիւն Աղեքսանդրի») և այլն, որոնց մասին «Աշխարհագրության» հեղինակը չի հիշատակում (Հ. Մանանդյան, Խորենացու առեղծվածի յուժումը, Երևան, 1934, էջ 21—25):

⁴⁰ Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913, էջ 27:

«Աշխարհագրութեան» հիմնական աղբյուրները հիշատակված են ոչ միայն բուն տեքստում, այլև առարկան ավարտող նյութի վերջում, այսինքն «Աստեղաբաշխական երկրաչափութեան» վերջում և ոչ միայն այն ժամանակ, երբ վերջինս «Աշխարհագրութեան» կից է գետեղված լինում, այլև՝ երբ նվիրված «Տարերքին»⁴¹։ Դեռ ավելին, որոշ ձեռագրերում, երբ գրիչները «Աստեղաբաշխական երկրաչափութիւնը» բաց են թողել, սույն ամփոփումը գետեղել են նախորդող նյութի՝ «Մղոնաչափքի» վերջում⁴²։ Իսկ այդ ամփոփումը դիմումն է նրան, ում պատվերով գրվել է սույն գործը։ «Այս քել յինէն ընծայ գրաւորական, վերծանեալ ի Պորփյուրի ներգործութենէն և գեղգեղեալ ի Պտղմեական գրամարտիկոս տառիցն, և ի բաղմավէպ Պատմութիւնէն Պապայայ Աղեքսանդրացւոյ։ Ողջ լին»⁴³։

Վերջին երկու հեղինակներին ծանոթ ենք, իսկ ի՞նչ գործ ունի այստեղ Պորփյուրը՝ իր «Ներգործութեամբ» կամ «Ներածութեամբ»։ Անշուշտ Պորփյուրը Հիպպոդիտոսի հետ չի շփոթված, որովհետև չեն շփոթված նաև նրանց գործերը՝ «Իիրք Ծննդոց»-ը և «Ներածութիւնը»։ Մնում է հետ գնալ երկրաչափությունից երաժշտություն, այստեղից էլ թվաբանություն, այսինքն Պորփյուրից քաղված տեղիներ փնտրել «Քննիկոնի» մաս կաղմող քառյակ արվեստներից որևէ մեկում, քանի որ այս սկզբնախաղասության մեջ ամփոփված է պատվիրատուին ուղարկված նյութն ամբողջապես, որտեղ Պորփյուրը և Պապայոս Աղեքսանդրացին նյութի ընդգրկման սահմաններն են, այսինքն՝ սկիզբը և վերջը։ Հիրավի, Պորփյուրի «Ներածութեան» սկզբի մասը (որոշ փոփոխությամբ) տեղադրված է Անանիա Շիրակացու գործնական թվաբանության սկիզբում, դարձյալ որպես ներածություն։ Այնքան շատ է Պորփյուրն օգտագործված այդ հատվածում, որ Շիրակացու գործնական թվաբանության սկզբի հատվածի (խնդիրների) հրատարակիչ Գ. Տեր-Մկրտչյանը, համեմատելով այն Պորփյուրի «Ներածութեան» հետ, գտնում է, որ այդ ուրիշի ձեռքի գործ է⁴⁴ և դուրս է նետում Շիրակացու երկից։ Նրան հետևում է Ա. Աբրահամյանը⁴⁵։ Դրա պատճառը, մեր կարծիքով, ոչ այնքան Պորփյուրի «Ներածութեան» սկիզբից քաղված մասի ամբողջականությունն է, որքան Շիրակացու «Ներածութեան» առաջին նախադասության սխալ վերծանումը, ուր «Զամենայն ասացի մասունս...» բառակապակցության փոխարեն կարդում էին «Զամենայն ասաց իմաստունն», և այս «իմաստունը» շփոթության մեջ է գցել բանասերներին⁴⁶։

⁴¹ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 8132, էջ 133ա։

⁴² Նույն տեղում, ձեռ. № 2019, էջ 302բ, 1127, էջ 231բ։

⁴³ Անանիա Շիրակացի, Մատենագրություն, էջ 356։

⁴⁴ «Անանիան կամ մեկ տրիշը Պորփյուրի ներածության սկզբնավորությունը կամեցել է արմարեցնել իբրև հառաջարան հարցումներին... Աստեղի կլինէր, մեր կարծիքով, նեթադրել թե Շիրակացին ինքն է Պորփյուրի բանաքաղը...» (Գ. Տեր-Մկրտչյան, Անանիա Շիրակացի, Վաղարշապատ, 1936, էջ 11—12)։

⁴⁵ Անանիա Շիրակացի, Մատենագրություն, էջ 64—65, 227։

⁴⁶ Այդ մասին հանգամանորեն տե՛ս մեր «Անանիա Շիրակացու «Քննիկոնը» հոդվածը, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1974, № 8։

Ահա այդ բնագրերի համեմատությունը.

Ներածություն Պորփիրի

Ելույր հարկաւորի, Քրիստոսի է և յառս Արիստոտելի Ստորոգութեանցն վարդապետութիւն, գիտել՝ զի՞նչ սեռ և զի՞նչ տարբերութիւն և զի՞նչ տեսակ, զի՞նչ յատուկ և զի՞նչ պատահումըն, և ի սահմանացն բացատրութիւն, և բոլորովմբ յաղագս բաժանման, և ապացոյցի պիտանացոյ ելույր սոցայցն տեսութիւն. համառօտ քեզ ընծեոութիւն առնելով՝ փորձեցայց ի ձեռն սակաւօց՝ իբր ներածութեան եղանակի՝ զառ ծերունեացն անցանել բանի, ի խորագունիցն ի բաց կալ ի խնդրոց, և պարզագունիցն չափաւորապէս հանդիպելով:

Արդ աստէն իսկ վաղվաղակի յաղագս սեռի և տեսակի:

«Յաղագս հարցման և լուծման»

Զամենայն ասացի մասունս, թէպէտ և սակաւ ի բազմած, եթէ զի՞նչ ընդունելութիւն, զի՞նչ բացատրութիւն, զի՞նչ բազմապատիկ և բոլորովին յաղագս բաժանմանց, և ապացոյցից պիտանացոյ ելույր սոցայցն տեսութեանց:

Համառօտ քեզ ընծեոութիւն առնելով՝ փորձեցայց ի ձեռն սակաւօց՝ իբր ներածութեան եղանակի՝ զառ ծերունեացն անցանելով, ի խորագունիցն ի բաց կալ ի խնդրոց և պարզագունիցն չափաւորապէս հանդիպելով:

Արդ աստէն իսկ վաղվաղակի յաղագս հարցման և լուծման:

Ինչպէս ցույց են տալիս ընդգծված բառերը, այս փոխառութեան մասին իսկապէս կարելի էր գրել «...վերծանեալ ի Պորփիրի Ներգործութենէ»:

Իսկ գործնական թվաբանութեան հեղինակը Անանիա Շիրակացին է, բնականաբար նա էլ հարմարեցրել է Պորփյուրի «Ներածութեան» սկիզբը իր գործի սկզբին և այն հիշել իր գործի վերջում, որպէս ամփոփում:

Շիրակացու գործնական թվաբանութեան սկզբում Պորփյուրի «Ներածութիւնից» բաղված հատվածի կայուն առկայությունը և «Աշխարհագրութեան» վերջում հեղինակի ուղղակի խոստովանությունն այդ մասին կրկին ցույց են տալիս, որ Անանիա Շիրակացու գործնական թվաբանութեան սկզբի «Ներածութիւնը» անհարազատ չէ, որ Շիրակացին այն առել է Պորփյուրից և հարմարեցրել իր գործին, և որ «Աշխարհագրութեան» վերջում հեղինակի ակնարկած Պորփյուրի «Ներածութիւնը», որ թվարկվում է Կղավգիոս Պտղոմէոսի և Պապպոս Աղեքսանդրացու գործերի հետ, Շիրակացու գործնական թվաբանութեան սկզբում բերված ներածությունն է: Իսկ այն անձնավորությունը, որին դիմում է հեղինակը «Աշխարհագրութեան» վերջում («Այս քեզ յինէն ընծայ գրաւորական... Ողջ լեր ի Տէր») և գործնական թվաբանութեան սկզբում՝ Պորփյուրից առնված հատվածում («Զամենայն ասացի մասունս... քեզ ընծեոութիւն առնելով»), Հայոց կաթողիկոս Անաստաս Ակոռեցին է, որի հանձնարարությամբ գրվում էր «Քննիկոնը» և ոչ «ոմն իմաստասեր», որին «Աշխարհացոյցի» հեղինակը իր աշխատությունը «նվիրում է»⁴⁷:

Այստեղ, սակայն, մի հարց է առաջանում. ինչո՞ւ գործնական թվաբանութեան ներածության և «Աշխարհագրութեան» աղբյուրները նշված են «Նրկրաչափութիւն» բաժնի վերջում՝ միասին:

47 Անանիա Շիրակացի, Մատենագրություն, Լջ 115:

Անանիա Շիրակացին, հսկայական ժամանակ, եռանդ ու գիտելիքներ պահանջող «Քննիկոնի» վրա աշխատելիս (ինչպես երևում է աղբյուրների քննությունից) զրաժը մաս-մաս ուղարկում էր կաթողիկոսին: Այդպես էր վարվում իր պատվիրատուի հետ նաև Մովսես Խորենացին «Հայոց պատմությունը» գրելիս⁴⁸: Կաթողիկոսի պատվերով էր ստեղծվում «Քննիկոնը», որի մեջ, աստվածաբանական գիտություններից բացի, առաջին անգամ բավականին շոշափելի ծավալով տեղ էր հատկացվում նաև ճշգրիտ գիտություններին: Հեղինակը դրանց անդրադառնում էր որպես տոմարը բացատրող գիտելիքներ, եկեղեցու պատմությունը, ժամանակագրությունը, Արարածոց գիրքը, ազգահամարքը հասկանալի դարձնելու մտահոգությամբ: Ինչպես Մաքիստրոսն է ասում, առանց «Քննիկոնի» մեջ ամբարված գիտության «բոլորովին ոչ գոյ հնար թեևակոխել զայնպիսի աստուածաբանութիւնս, քանզի պարտ է նախ ի բնաբանականէն յուսումնականն ամբառնալ, և աստուստ աստուածաբանականն»⁴⁹:

Այնուամենայնիվ, VII դարում, այդպիսի գիտելիքներ պարունակող աշխատությունը պետք է եպիսկոպոսական ժողովի քննության առարկա դառնար: Այդ ժողովն էր, որ կարող էր «Քննիկոնին» գործադրության իրավունք տալ կամ միանգամից մերժել՝ նույնիսկ հեղինակին մեղադրելով: Իսկ եթե սրան ավելացնենք, որ Շիրակացին արդեն բավականին հակառակորդներ ուներ հոգեվորականության միջավայրում, պարզ է դառնում հաճախ, թե ինչու նա Ետիպիած է լինում մատենացույց անել իր աղբյուրները, շեշտը դնելով հատկապես եկեղեցական հայրերի ստեղծած դրականության վրա, Աստվածաշնչի վրա, և եթե այնտեղ չէր գտնվում անհրաժեշտ նյութ, նոր միայն դիմում էր արտաքին գրքերին:

Անաստաս կաթողիկոսը, Շիրակացու շարադրանքը ստանալով կարգում էր, դիտողություններ ու առաջարկություններ անում: Ինչպես երևում է քննությունից, Շիրակացին կաթողիկոսին է ուղարկել նախ «Քննիկոնի» սկիզբը՝ ներածությունը, որ կոչվում էր «է աստուածաբանութիւն» կամ «Տոգորք աստուածային», և տեսական թվաբանությունը, թվերի գիտության անհրաժեշտությունը հիմնավորող մասով, որը հայտնի է Շիրակացու «Ինքնակենսագրութիւն» անունով: Ներածության մեջ կաթողիկոսին շէր բավարարել երկնային մարմինների, հատկապես լուսատուների մասին բերված նյութը և նա Անանիա Շիրակացուց «Վասն սրբոց տանից Աստուծոյ» շարադրանքը պահանջելիս ներկայացնում է նաև իր ցանկությունները: Որպես այս իրողության արտահայտություն պետք է դիտել «Զատկի» ճառում Շիրակացու պարտավորված համաձայնությունը. «Արդ, վասն չափոյ մեծութեանն, եւ դրից հաստատութեանն, եւ իշխանութեանցն, եւ որոշմանցն, եւ այլոց աստեղաց կարգի հանգամանաց ասելն առ այժմ արգելցի, մինչեւ բովանդակեցից զխորհուրդ սրբոյ Զատկիս և զՏոմար ամենայն ազգաց, եւ ասյա պատմեցից վերջ եւս թէ զինչ վասն այսր արտաքինքն, եւ զինչ եկեղեցականքն»⁵⁰:

Եվ Շիրակացին Տոմարը ավարտելուց հետո կատարում է իր խոստումը: «Զխոստացեալսն մեր հատուցուք զբան՝ յարտաքնոցն առեալ զառարկու-

48 Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան, 1968, «Ներածություն», էջ 14:

49 «Գրիգոր Մաղիսարոսի Թղթերը», էջ 8:

50 Անանիա Շիրակացի, Մատենագրություն, էջ 293:

թիւն, որպէսզի յետո եկեղեցականն ելեալ մեր՝ ղեղեցիկ հետեւեցի շարադասակ ընդունակը»⁵¹: Այս այն երկն է, որ մկրտվել է «Տիեզերագիտութիւն» մերնագրով:

Ուրեմն «Քննիկոնից» կաթողիկոսի մոտ էր առաջին հատվածը՝ ներածութեամբ և տեսական թվաբանութեամբ: Երկրորդ հատվածը զործնական թվաբանութիւնն էր Պոլիպոլի «Ներածութիւնից» առնված հատվածով, երաժշտութիւն և երկրաչափութիւն բաժինները, որ վերջանում էր «Աստեղաբաշխական երկրաչափութեամբ»: Այստեղ էլ Շիրակացին ամփոփել է նյութը, ընդգծելով կաթողիկոսին ուղարկած հատվածի սահմանները՝ Պոլիպոլի «Ներածութիւնից» առնված հատվածը, որպէս սկիզբ և Պասպոս Աղեքսանդրացին՝ որպէս վերջ:

Ամփոփենք. 1) «Աշխարհագրութիւնը» մասն է կազմել Անանիա Շիրակացու «Քննիկոնի» «Երկրաչափութիւն» բաժնի: 2) Այն իր սկզբում ունեցել է Հրապողիտոսի Մենդոց գրքի առաջին հատվածները, որոնք վերաբերում են նուրի երեք որդիների և նրանց ժառանգների ծննդաբանութեանը, լեզուների տառածմանը երկրի երեք մասերում («Եւրոպա», «Արեւիկա» և «Ասիա»), որոնց նկարագրութեանն էլ նվիրված է բուն «Աշխարհագրութիւնը»: 3) «Աշխարհագրութեան» հիմնական աղբյուրներն են Կղավզիոս Պտղոմեոսի, Պասպոս Աղեքսանդրացու և Հրապողիտոս Բոստրացու աշխատութիւնները:

РАЗДЕЛ ГЕОМЕТРИИ В «КРИТИКОНЕ» АНАНИИ ШИРАКАЦИ

А. С. МАТЕВОСЯН

(Резюме)

На основе изучения многочисленных рукописей нам удалось предположительно восстановить утраченный труд Анании Ширакаци «Критикон». Он состоял из двух частей; первая часть имела предисловие и разделы: а) арифметика, б) музыка, в) геометрия, г) астрономия. Вторая часть также имела предисловие и следующие разделы: а) общий и армянский календарь, б) космография и данные, касающиеся прочих наук, в) литература, г) риторическое искусство (частично).

В настоящей статье рассматривается раздел «Критикона», посвященный геометрии. Показывается, что сочинение VII в., известное под названием «География», являлось частью этого раздела, куда была включена и часть сочинения Ипполита. В «Географии» использованы труды Клавдия Птолемея, Паппа Александрийского и Ипполита. Наряду с «Географией» в раздел геометрии входила часть «Начал» Эвклида, а также вычисления расстояний между известными городами и крупными портами и астрономическая геометрия.

⁵¹ Անանիա Շիրակացի, Տիեզերագիտութիւն և տոմար, Երևան, 1940, էջ 1: